ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1956 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆՈՐ ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐ ԵՎ ԹՂԹԱԿԻՑ-ԱՆԴԱՄՆԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐ

Մարտիրոս Սերգեյի Սարյանը ծնվել է Նոր-Նախիջևանում (այժմյան Ռոստով Դոնի Պրոլետարական ռայոն), 1880 թ. փետրվարի 28-ին, հողագործի ընտանիքում։

1888—1895 թթ. Մ. Ս. Սարյանը միջնակարգ կրթություն է ստանում Նոր-Նախիջևանի քաղաքային հայկական գիմնազիայում։

1897—1904 թթ. Սարյանը սովորում է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում, անվանի նկարիչներ Ա. Արխիպովի, Վ. Սերովի և Հ. Կորովինի դասարաններում։

Նկարչական ցուցահանդեսներում սկսում է մասնակցել 1900 թ. 1910 թ. Տրետյակովյան պատկերասրահում պահպանվում է Մ. Ս. Սարյանի 2 նկարը («Դլիցինիաներ», «Մրգավաճառանոց» և «Կեսօր փողոց Պոլիս»)։

1910—1913 թթ. Մ. Ս. Սարյանը ճանապարհորդություն է կատարում դեպի Տաճկաստան, Եգիպտոս և Պարսկաստան։ 1916 թ. Մ. Ս. Սարյանը հայ անվանի նկարիչներ Փ. Թերլեմեզյանի, Վ. Սուրենյանի, Ե. Թադևոսյանի հետ մասնակցում է հայ արվեստագետների ընկերության կազմակերպմանը։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց մի տարի հետո, 1921 թ. Մ. Ս. Սարյանը ընտանիքով տեղափոխվում է Երևան։ ՀՍՍՌ Ժողկոմխորհի հանձնարարությամբ նա ակտիվորեն մասնակցում է Երևանի կերպարվեստի ուսումնարանի, նկարիչների ընկերության, Պետական թանգարանի կազմակերպմանը և հիմնադրմանը։

1924 թ. Մ. Ս. Սարյանը մի խումբ ռուս նկարիչների հետ մեկնում է Իտալիա, մասնակցելու Վենետիկում բացվող կերպարվեստի համաշխարհային ցուցահանդեսին։

Նկատի ունենալով Մ. Ս. Սարյանի հաջողությունը այդ ցուցահանդեսում, Հայաստանի կառավարությունը 1926 թ. նրան շնորհում է ՀՍՍՌ ժողովրդական նկարչի կոչում։

1926 թ. Մ. Ս. Սարյանը մեկ և կես տարով ստեղծագործական գործուղման է ուղարկվում Փարիզ, որտեղ և կազմակերպում է իր անհատական ցուցահանդեսը։

1939 թ. մինչ 1951 թ. Մ. Ս. Սարյանը եղել է Հայաստանի սովետական նկարիչների միության նախագահ։ 1936 թ. նա պարգևատրվել է «Աշխատանքային Կարմիր Դրոշի», 1939 թ. Պատվո նշան, 1945 և 1950 թթ. Լենինի երկու շքանշաններով, ինչպես և «Կովկասի պաշտպանության» և «Աշխատանքային արիության» մեդալներով։

Մ. Ս. Սարյանը ընտրվում է ՍՍՌՄ Գերագույն Սովետի 2-րդ, 3-րդ և 4-րդ գումարումների դեպուտատ։

1949—1951 թթ. Մ. Ս. Սարյանը գլխավորել է ՀՍՍՌ ԳԱ Արվեստի

պատմության և տեսության սեկտորը։ Մասնակցել է կերպարվեստի հանրապետական և միութենական բոլոր ցուցահանդեսներին, ինչպես և այն համաշխարհային ցուցահանդեսներին, որոնց մասնակցել է Սովետական Միությունը։ Մ. Ս. Սարյանը հանդիսանում է ՍՍՌՄ նկարիչների միության կազմկոմիտեի անդամ։

1936 թ. կազմակերպվում է Մ. Ս. Սարյանի անհատական ցուցահանդեսները Մոսկվայում և Լենինգրադում, իսկ 1955—56 թթ.՝ Երևանում, Թբիլիսիում, Մոսկվայում և Լենինգրադում։

1947 թ. Մ. Ս. Սարյանը հանդիսանում է ՍՍՌՄ Գեղարվեստների ակադեմիայի իսկական անդամ։

Արտաշես Բալասանի Կարինյանը ծնվել է 1886 թ. նոյեմբերի 11-ին, Բաքվում՝ Բալախանում։ Միջնակարգ կրթությունը ստանում է Բաքվի առաջին գիմնազիայում։ Դեռևս այդ տարիներից նա մասնակցում է աշակերտական շարժումներին և դաստիարակվում է ռևոլյուցիոն գաղափարներով համակված միջավայրում։

1906 թ. ընդունվում է Պետերբուրգի համալսարանը։ Համալսարանում նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերում ռևոլյուցիոն անցքերի նկատմամբ և 1906 թ. սկսում է տպագրվել բոլշևիկյան մամուլում։ «Կայծ» թերթում տպագրվում է նրա «Բաքվի անարխիստների դեմ» հոդվածը։

1907 թ. մի խումբ ուսանողների հետ մեկնում է Տերիոկի (Ֆինլանդիա), որտեղ Պետերբուրգի բոլշևիկ ուսանողների խնդրանքով կազմակերպվում է Վ. Ի. Լենինի զեկուցումը։ Վերադառնալով Ֆինլանդիայից, Կարինյանը առավել մեծ լիցքով ու եռանդով է լծվում ռևոլյուցիոն աշխատանքներին։ Ավարտելով համալսարանը Ա. Բ. Կարինյանը վերադառնում է Բաքու, ռևոլյուցիոն-պրոպագանդիստական աշխատանք տանում բանվորական խմբակներում։ 1908 թ. «Բակինսկի բարոչիյ» թերթում տպագրում է «Սինդիկալիստները և քաղաքական պայքարը» հոդվածը։ Այդ տարիներին «Նոր խոսք» լեգալ ամսագրում տպագրում է հրապարակախոսական մի շարք հոդվածներ։ Ռևոլյուցիոն գործունեության համար նա 1913 թ. ձերբակալվում է, շուտով ազատվում բանտից, սակայն նրան հինգ տարի արգելվում է ապրել Բաքվում։ Ա. Բ. Կարինյանը մի շարք հոդվածներ է հրապարակում «Պրավդա»-յում. 1914 թ.՝ «Պրավդայի ուղին», «Բանվոր», 1917 թ.՝ «Ռևոլյուցիոն արդարադատության մասին» և այլն։

Շահումյանի և Ջափարիձեի առաջարկով 1917 թ. Ա. Բ. Կարինյանը գալիս է Բաքու, ուր պարտիական աշխատանքների հետ միասին, զբաղվում է նաև գրական-հրապարակախոսական գործունեությամբ։ 1917 թ. մինչև 1918 թ. ապրիլ ամիսը աշխատում է, որպես բանվորների և զինվորների դեպուտատների Բաքվի Սովետի օրգան «Իզվեստիա...»-յի խմբագիր։

Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետի ստեղծումից հետո ընտրվում է Արդարադատության Ժողովրդական Կոմիսար։ Բաքվի կոմունայի անկումից հետո աշխատում է Լենինգրադում և Մոսկվայում։ Հանդիսանալով Ազգությունների Ժողովրդական Կոմիսարիատի գրական-հրատարակչական բաժնի վարիչ, նա միաժամանակ վարում էր հայերեն լեզվով հրատարակվող «Կոմունիստ» ամսագրի և «Կարմիր դրոշակ» թերթի խմբագրի պարտականությունները։ Այդ ժամանակամիջոցում Ա. Բ. Կարինյանը հրա-

պարակում է «Կովկասի պրոլետարիատի պատմությունից», «Օսկար Ուալդի հեքիաթների մասին», «Հին և նոր արվեստ» աշխատությունները։

1921 թ. վերջին Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի և Ժողկոմսովետի որոշմամբ մեկնում է Թուրքիա և Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ հանդես է գալիս մի շարք վեկուցումներով և հոդվածներով։

Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակից հետո Ա. Բ. Կարինյանը նշանակվում է Արդարադատության Ժողովրդական Կոմիսար, հետագայում վարում է Հայաստանի Կենտգործկոմի նախագահի, Լուսավորության Ժողովրդական Կոմիսարի տեղեկալի պաշտոնները և այլն։ 1920—30-ական թթ. Ա. Բ. Կարինյանը աշխատում է որպես «Նոր ուղի» գրական գեղարվեստական ամսագրի խմբագիր։

Այնուհետև, 1930-ական թվականից սկսած մինչև այժմ Կարինյանը զբաղվում է գրական-հրապարակախոսական բեղուն աշխատանքով։ Պարբերական մամուլում հրապարակվում են նրա մի շարք հոդվածները Պուշկինի, Ջերնիշևսկու, Գորկու, Չեխովի, Կարալենկոյի, Մայակովսկու և ուրիշների մասին։ Վերջերս հրապարակվեց նրա «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» կապիտալ աշխատության առաջին հատորը։ Այժմ նա շարունակում է աշխատել երկրորդ հատորի վրա։

ԹՂԹԱԿԻՑ-ԱՆԴԱՄՆԵՐ

Հայկ Նահապետի Ազատյանը ծնվել է 1881 թ. սեպտեմբերի 25-ին, Կիրովականում։ Կրթությունը ստանում է Թիֆլիսի ռեալական ուսումնարանում, որը ավարտելուց հետո՝ 1903 թ. մեկնում է Շվեյցարիա և ընդունվում Բեռնի համալսարանը։ Նույն թվականին նա մասնակցում է Բեռնում հրավիրված Արևմտյան Եվրոպայի հայ ուսանողության համագումարին, որին մասնակցում է 13 հայ սոցիալ-դեմոկրատ։ 1905 թ. ռևոլյուցիայի օրերին նա թողնում է համալսարանը և ամբողջապես նվիրվում քաղաքական գործունեությանը։ Շուտով վերադառնում է Թիֆլիս և աշխատում մենշևիկյան պարտիայի շարքերում։ 1918 թ. փետրվարին Թիֆլիսում ստեղծվում է ինտերնացիոնալիստ մենշևիկների մի խումբ, որը վճռականորեն քննադատում է Ռուսաստանից անջատվելու տեղական մենշևիկների քաղաքականությունը։ Այդ խմբի մասնակիցների մենշևիկյան պարտիայում մնալու հանգամանքը ստանում է ֆորմալ բնույթ։

1919 թ. մինչև 1920 թ. վերջը Հ. Ն. Ազատյանը մեծ աշխատանք է ծավալում պրոֆմիութենական կազմակերպություններում։ 1920 թ. վերջին նա դիմում է Վրաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմին՝ ընդունելու իրեն Կոմպարտիայի շարքերը։ 1920 թ. դեկտեմբերի 13-ին «Կոմունիստ» թերթում Հ. Ն. Ազատյանը հանդես է գալիս հոդվածով՝ Կոմունիստական պարտիայի շարքերը անցնելու մասին։ Մենշևիկյան կառավարությունը առաջարկում է նրան անմիջապես հեռանալ Վրաստանի սահմաններից, և Վրաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմը նրան աշխատանքի է ուղարկում Հայաստան։ 1920 թ. դեկտեմբերին նա Թիֆլիսից փոխադրվում է Երևան։ Հայաստանի ԿՊ(բ)ԿԿ նշանակում է նրան պրոֆմիությունների նախագահ։ Սովետական Հայաստանում աշխատում է մինչև 1939 թ.։ Այդ տարիներին նշանակվում է Կենտգործկոմի նախագահի տեղակալ, Կենտկոմի երկրորդ քարտուղար և այլն։

1920—1930 թթ. Հ. Ն. Ազատյանը հրապարակում է մի շարք լուրջ աշխատություններ, որոնց թվին կարելի է դասել «Գյուղատնտեսական պրոլետարիատը և միջազգային կոմունիստական շարժումը», «ՍՍՌՄ-ի տնտեսական զարգացումը և գյուղատնտեսական կոոպերացիան», «Հայաստանում սովետական կարգերի հաստատման 6-ամյակը», «Աշխատավարձի հարցեր», «Նոր տնտեսական քաղաքականություն», «Հողի ազգայնացման և սոցիալիզացիայի մասին», «Դաշնակցության պարտիայի էությունը» և այլն։

1930-ական թվականներից մինչև այսօր Հ. Ն. Ազատյանը Թիֆլիսում զբաղվում է դասախոսական աշխատանքով։

Վահան Հարությունի Ռշտունին ծնվել է 1894 թ. փետրվարի 9-ին, Էջմիածնում, արհեստավորի ընտանիքում։ Սովորում է Գևորգյան ճեմարանում, որը ավարտում է 1915 թ.։

1924 թ. ավարտում է Թիֆլիսի Լենինի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի անտեսագիտական ֆակուլտետը և փոխադրվում Երևան։ 1924—1925 թթ. Երևանի համալսարանում ավանդում է սոցիալիզմի պատմությունը։ 1930 թ. առ այսօր համալսարանում դեկավարում է ՍՍՌՄ ժողովուրդների պատմության ամբիոնը։ Տարիներ շարունակ աշխատակցել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում։ 1941 թ. ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում պաշտպանում է դոկտորական դիսերտացիա։ 1944 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում, նույն թվականին՝ Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչի կոչում։ Ռշտունին մեծ վաստակ ունի երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում։

Իր գիտական դասախոսական գործունեության ընթացքում Վ. Հ. Ռշտունին հրապարակում է մի շարք հոդվածներ հայ հասարակական հոսանքների, գյուղացիական շարժումների վերաբերյալ. «Հայ լիբերալիզմի պատմությունից», «19-րդ դ. վերջի հայկական մամուլը», «Գյուղացիական շարժումը Հայաստանում», «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում» և այլն։ Վ. Հ. Ռշտունու մեծածավալ աշխատությունները «Ցարիզմի ագրարային քաղաքականությունը և գյուղացիական շարժումը Հայաստանում 20-րդ դ. սկզբում», «19-րդ դ. հայ հասարակական հոսանքների պատմությունից» ուշադրությամբ են ընդունվել հասարակության կողմից։

Վ. Հ. Ռշտունին եռանդով շարունակում է գիտական-մանկավարժական գործունեությունը։

Մկրտիչ Մամբրեի Մկրյանը ծնվել է 1907 թ., Վան քաղաքում, ուսուցչի ընտանիքում։ 1915 թ. ընտանիքով գաղթում է Անդրկովկաս և 1919 թ. վերջնականապես հաստատվում Երևանում։

Բարձրագույն կրթությունը ստանում է Երևանի Մոլոտովի անվան պետական համալսարանում։ 1930 թ. ավարտելով համալսարանի պատմագրական ֆակուլտետը, ընդունվում է ասպիրանտուրա։

1933 թ. սկսած՝ անընդհատ դասախոսում է համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետում հայ գրականության պատմության առարկան։ 1941 թ. մինչև 1948 թ. վարում է նաև այդ ֆակուլտետի դեկանի պաշտոնը։

1945 թ. պաշտպանում է դոկտորական դիսերտացիա և ստանում ֆիլո-

լոգիական գիտությունների դոկտորի աստիճան, հետո նաև պրոֆեսորի կոչում։

1947 թ. մինչև 1953 թ. վարում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեգյանի անվան Գրականության ինստիտուտի դիրեկտորի պաշտոն։

Մ. Մ. Մկրյանին են պատկանում մի շարք լուրջ հոդվածներ Խ. Աբովյանի, Նալբանդյանի, Ռաֆֆու, Թումանյանի, Նար-Դոսի ստեղծագործությունների վերաբերյալ, նա է գրել «Հայ գրականության պատմության» ձեռնարկի առաջին հատորի հին և միջին դարերի մասը։ Վերջերս Մ. Մ. Մկրյանը հրատարակեց «Գրիգոր Նարեկացի» մեծածավալ աշխատությունը։

1954 թ. ընտրվում է Պետական համալսարանի հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ։

Գուրգեն Գրիգորի Սևակը ծնվել է 1904 թ., Թբիլիսիում, բանվորի ընտանիքում. սկզբնական և միջնակարգ կրթությունը ստացել է նույն քաղաքում։ Ավարտելով 16-րդ տեխնիկումը (նախկին Ներսիսյան դպրոցը), 1924 թ. տեղափոխվում է Երևան և ընդունվում Պետհամալսարանի պատմա-գրական բաժինը, որի լրիվ դասընթացն ավարտում է 1929 թ.։ Հաջորդ թվականին ընդունվում է ասպիրանտուրա և ավարտում 1932 թ.։

Բանասիրական - մանկավարժական աշխատանքն սկսում է 1931 թ. Երևանի պետհամալսարանում իբրև դասախոս։

Գ. Գ. Սևակը տարիների ընթացքում տասնյակ զեկուցումներով հանդես է գալիս Պետհամալսարանի, Արմֆանի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական բաժանմունքի և Լեզվի ինստիտուտի գիտական սեսիաներին Երևանում, Թբիլիսիում և Բաքվում։ Գ. Գ. Սևակը ակտիվորեն մասնակցում է գիտական-լեզվաբանական խնդիրների մըշակմանը, պարբերական մամուլից հայտնի են նրա հետաքրքրական հոդվածները։ Նա մի շարք լուրջ աշխատությունների հեղինակ է, ինչպես, օրինակ՝ «Հայոց լեզվի շարահյուսությունը», «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն», «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» և այլն։

Այժմ Գ. Գ. Սևակը Երևանի Մոլոտովի անվան պետական համալսարանում ղեկավարում է հայոց լեզվի ամբիոնը։